

Մասնագիտության նկարագիրը

Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Վարսահարդար
I. Դերը	Իրականացնում է վարսավիրական ծառայությունների մատուցում և հաճախորդների սպասարկում:
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Մազերի կտրում և հարդարում	
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none">1. հաճախորդին սպասարկելու համար նախապատրաստական աշխատանքների կատարում,2. մազերի լվացում և խնամքի իրականացում,3. տղամարդկանց կամ կանանց մազերի կտրում՝ ըստ հաճախորդի պահանջի,4. մազերի հարդարում,6. հաճախորդի սպասարկման ավարտական աշխատանքների կատարում:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none">• նախապատրաստական աշխատանքները ճիշտ են իրականացված,• մազերը ճիշտ կտրված և հարդարված են,• հաճախորդը գոհ է ծառայությունից:
Խնդիրների բնագավառ 2. Քիմիական եղանակով մազերի գանգրացման աշխատանքների կատարում	
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none">1. հաճախորդին սպասարկելու համար նախապատրաստական աշխատանքների կատարում,2. տարբեր եղանակներով մազերի քիմիական գանգրացում,3. հաճախորդի սպասարկման ավարտական

	աշխատանքների կատարում:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • նախապատրաստական աշխատանքները ճիշտ են իրականացված, • մազերի քիմիական գանգրացումը կատարված է, • հաճախորդը գոհ է ծառայությունից:
<u>Խնդիրների բնագավառ 3.</u> Մազերի ներկման աշխատանքների կատարում	
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1. հաճախորդին սպասարկելու համար նախապատրաստական աշխատանքների կատարում, 2. մազերի գունազրկման և ներկման աշխատանքների կատարում, 3. մազերի գունային երանգավորման աշխատանքների կատարում, 4. հաճախորդի սպասարկման ավարտական աշխատանքների կատարում:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • նախապատրաստական աշխատանքները ճիշտ են իրականացված, • մազերի ներկումը ճիշտ է կատարված, • հաճախորդը գոհ է ծառայությունից:
<u>Խնդիրների բնագավառ 4.</u> Հանդիսավոր սանրվածքների կատարում	
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1. հաճախորդին սպասարկելու համար նախապատրաստական աշխատանքների կատարում, 2. մազերի և առանձին տարրերի ձևավորման աշխատանքների կատարում, 3. հաճախորդի սպասարկման ավարտական աշխատանքների կատարում:

Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • նախապատրաստական աշխատանքները ճիշտ են իրականացված, • սանրվածքը ստացվել է պահանջված ձևին համապատասխան, • հաճախորդը գոհ է ծառայությունից:
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	<p>Պատասխանատու է բնակչությանը վարսավիրական ծառայությունների մատուցման ժամանակ մազերի կտրման, գանգրացման, հարդարման, և այլ մասնագիտական աշխատանքների որակով և անվտանգ կատարման համար:</p>
IV. Լեզուները	<p>հայերեն - գերազանց</p> <p>ռուսերեն՝ լավ</p> <p>երկրորդ օտար լեզու - բավարար</p>
V. Համակարգիչը	<p>MS Word - բավարար,</p> <p>MS Excel՝ բավարար</p> <p>INTERNET՝ բավարար</p>
VI. Գիտելիքները	<p>Պետք է իմանա.</p> <ol style="list-style-type: none"> 1. Սանիտարիայի և հիգիենայի կանոնները, 2. մազերի տեսակները, կառուցվածքը, գլխամաշկի և մազերի հիմնական խնդիրները, առաջացման պատճառները և կանխարգելման ձևերը, 3. մարդու գլխի պլաստիկ կառուցվածքը, 4. մազերի և գլխամաշկի ֆիզիոլոգիան, 5. մասնագիտական գործունեության ժամանակ օգտագործվող խնամքի միջոցների հատկությունները և բաղադրությունները, 6. գլխի մերսման տեխնոլոգիական գործընթացը, 7. կանանց և տղամարդկանց մազերի կտրվածքների

	<p>կատարման տեխնոլոգիական գործընթացները,</p> <p>8. տարբեր եղանակներով մազերի հարդարման տեխնոլոգիական գործընթացները,</p> <p>9. քիմիական եղանակով մազերի գանգրացման տեխնոլոգիական գործընթացները,</p> <p>10. մազերի ներկման տեխնոլոգիական գործընթացները,</p> <p>11. մազերի և հանդիսավոր սանրվածքների կատարման տեխնոլոգիական գործընթացները,</p> <p>12. վարսահարդարման ժամանակ օգտագործվող գործիքների նշանակությունը և կիրառման ձևերը:</p>
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>Պետք է կարողանա.</p> <ol style="list-style-type: none"> 1. պահպանել սանիտարահիգիենիկ պահանջները մասնագիտական գործունեության ընթացքում, 2. կիրառել հիվանդությունները կանխարգելիչ միջոցառումներ, 3. որոշել մազերի տեսակը, բաղադրությունը և հյուսվածքը, 4. նախապատրաստել աշխատեղը, 5. ապասարկել հաճախորդներին, 6. ընտրել համապատասխան միջոցներ մազերի կտրվածքի, հարդարման, ներկման, քիմիական գանգրացման և վարսահարդարման այլ աշխատանքների համար, 7. լվանալ հաճախորդի մազերը և մերսել գլուխը, 8. իրականացնել մազերի կանխարգելիչ խնամք, 9. կատարել կտրվածք և հարդարում, 10. կատարել մազերի քիմիական եղանակով գանգրացում, 11. կատարել մազերի ներկման, գունազերծման և գունային երանգավորման աշխատանքներ, 12. կատարել հանդիսավոր սանրվածքներ:

**VIII. Անձի որակական
հատկանիշներ**

- պարտաճանաչ
- մաքրասեր
- աշխատասեր
- շփվող
- հավասարակշռված
- ազնիվ